

ԳԱՌՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔ

ԱԶԳՐԱԿ


ՅԱՅԿԱԶՆԱՆ ՅԱՍՏԱՆԱԿԱԿԱՆԻՆ ԱԷՐ ՏՈՒՄՈՑ ԻՐ ՂԱՍԱԿՕՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՑՔԻՆ

«ՀԱՅԵՐԸ ԿԸ ՊԱՏԿԱԿԱՆ ԼՄԵՆԷՆ ՀԱՄԱԿՈՒԽՐԱՔ ԵՒ ՀՆԱԳՈՅՆ ԽՄԲԱԿՈՐՈՒՄՆԵՐՈՒՆ»

ՅԱՅՏԱՆԵՅ ՓԻՅՈՐՐ ՉԻԵՇՏԱԿԵԱՆ

Ներկայութեանը Լիբանանի հայոց թեմի առաջնորդ գեղդան արք. խաչերեանի, Յայկազեան համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Յայտոսեանի, պատանաատումներու եւ մշակութաւոր հոր բազմութեան, Փիթըր Յիշտակեան երկ երեսոյ խօսեցաւ հայերու ծագման «Տի. Էն. Էյ.»ի արթիւրմներուն մասին:

Յամալսարանի պատասխանատու դասախօսներէն ղոկտ. Արտա Էքմեքճի բացման խօսքէն ետք, Փիթըր Յիշտակեան շուրջ մէկ ժամ տեւորութեանը խօսեցաւ հայերու ծագման հնագոյն արթիւրմներուն մասին: Սակայն նախքան իր դասախօսութեան անցնիլը, Պելճիքս բնակութիւն հաստատած եւ այժմ Լիբանան գտնուող Փիթըր Յիշտակեան իր ողջոյնի խօսքը ըսաւ ներկաներուն եւ շնորհաւորեց: 86-ամեայ իր հայրը Արա Յիշտակեանը, որուն տարեդարձը կը գտագործակեր այս օրուան: «Ին պրպատումներս կը նուիրեմ հօրս», ըսաւ Փիթըր Յիշտակեան՝ շեշտելով, որ «հայերս կը պատկանեց «Տի. Էն. Էյ.»ի հնագոյն խմբաւորումներուն, որոնք կը յատկանշուին իրրեւ-



Փիթըր Յիշտակեան կը դասախօսուի

վարեմի, իրոյապտուկ եւ պատշաճ:

Շուրջ մէկ-ժամ տեւած իր դասախօսութեան ընթացքին Փիթըր Յիշտակեան պարզեց իր ձեռնարկին հիմնական տեղեկութիւնները, թէ իր կեդրոնը կը գտնուի աներկեան թեքսաս նահանգը, իրեն հետ կաշխատակցին բազմաթիւ մասնագէտ պատմաբաններ, գիտնականներ, ինչպէս՝ Մարք Արսլան, Յովհան Սիմոնեան, Ալեմ Յովնանեան (Ֆրանսայէն) եւ ուրիշներ:

50 հազար աներկեան տուար մըցանակի արժանացած այս ձեռնարկի պրպտումներէն, ցարդ ի յայտ կու գայ, թէ հայեր 90 առ հարիւր համեմատութեանը կը պատկանին ծիմային նոյն ցեղախումբին: Յիմնականին մէջ «Տի. Էն. Էյ.»ի 13 տարբեր խմբաւորումներու մէջ դասաւորուող հայկական ծագման սկզբնաղբիւրները իրենց կարգին ունին ենթաբաժանումներ եւ ճիւղաւորումներ:

«Անպայմանօրէն բոլոր հայերը Յայկի խմբաւորումին կընան չպատկանիլ», ըսաւ դասախօսը նշելով, որ աշխարհացրիւ իւրաքանչիւր հայ կընայ կազմել իր ընտանեկան շառակիղի «ծառը» 150-էն 500 տուարի միջին տարութեոք գումարով:

Փիթըր Յիշտակեան հայերու ծագման իրրեւ նախանկան շրջան բունց Կովկասը, Փոքր Ասիան, Կիլիկիան եւ Արցախ - Ղարաբաղ - Սիւնիքի շրջանը, որ մեծագոյն համեմատութիւնը՝ 40 առ հարիւր կը ներկայացնէ: «Մեզք մէկ ու միակ սկզբնաղբիւր չունինք», ըսաւ ան դիտել տալով, որ նորագոյն արթիւրմները ունին առնուազն 4 հազար տարուան կեանքի պատմութիւն:

«Տի. Էն. Էյ.»ի հայկական արթիւրմները իւրոյապտուկ են, «որովհետեւ շրջանին մէջ միակ նախաձեռնող ժողովուրդն ենք մեր նախնական ծագման փնտռութիւն», ըսաւ Յիշտակեան՝ նշելով, որ հայերը սկզբնապէս կը գործածէին առաւելաբար ուրարտական լեզուն: Ըստ իր պրպտումներուն յանգած վարկածին, հնդեւրոպական լեզուն ծագում առած է մեր Յայկական լեռնաշխարհին՝ մէջ եւ տարածուած դէպի Իրան ու Երոպա: Սակայն ան տակաւին յանդեալ փաստերու կը կարօտի լաւապէս իմնաւորելու համար իր այս տեսակէտը:

Փիթըր Յիշտակեան ընդօժեց, որ հակառակ արտաբական, օտմանեան, մեմորիքներու թէ այլ ցեղախումբերու արշաւանքներուն, հայկական «Տի. Էն. Էյ.»ի ծագման խմբաւորումները մնացած են անարդարո:

Ան նշեց, որ նոյն ծարճի գիտաշխատողներէն Լեւոն Եպիսկոպոսեան այժմ լծուած է Արցախ - Սիւնիքի շրջանին մէջ բարայրներ պերելու աշխատանքին՝ իմութիւններու յայտնաբերումով նորանոր փաստարկուումներու յանգելու նպատակով: